Հավելված 6
«ՀՀ ԼՄՎՔ ՀՄԱՇՁԲ-21/40»* ծածկագրով
*հրապարակության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման մրցույթի հրավերի*

# ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԼՄՎՔ ՀՄԱՇՁԲ-21/40

ք. Վանաձոր «22» 04 2021 թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյան -ի, որը գործում է –համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Շինէքսպերտ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արմինե Հովսեփյան-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վանաձոր համայնքի կարիքների համար Սայաթ-Նովայի անվան զբոսայգու հիմնանորոգման, թիվ 8 մանկապարտեզի նոր շենքի կառուցման, բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման, էներգախնայողության միջոցառումների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 5700000 (հինգ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վանաձորի համայնքապետարան
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Հ/Հ900232521022
ՀՎՀՀ 06901936

--------------------------------Մ.Ասլանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՇԻՆԷՔՍՊՐՏ» ՍՊԸ
Ք.Վանաձոր Թատերական 8/49-1
ՀՎՀՀ 06944187
Հ/Հ 1660013164610100
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ

----------------Ա.Հովսեփյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
« 22 » 04 2021թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ՀՄԱԱՇՁԲ-21/40 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը ** |
| 1 | 71241200 | ***Սայաթ-Նովայի անվան զբոսայգու հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքներ***<br>Տես ներքևում | դրամ | 1650000 | 1650000 | 1 | | Պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օր |
| 2 | 71241200 | ***Վանաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ էներգախնայող միջոցառումների կիրառմամբ նախագծանախահաշվային աշխատանքներ***<br>Տես ներքևում | դրամ | 1150000 | 1150000 | 1 | | Պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օր |
| 3 | 71241200 | ***Վանաձորի թիվ 8 մանկապարտեզի համար շենքի կառուցում նախագծանախահաշվային*** | դրամ | 2900000 | 2900000 | 1 | | Պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օր |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *աշխատանքներ*<br>Տես ներքևում | | | | | | | |

* աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:
** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

### *Վանաձոր համայնքի կարիքների համար Սայաթ-Նովայի անվան զբոսայգու հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքներ*

| | | |
|---|---|---|
| 1 | *Ծրագրի անվանումը* | ***Վանաձոր համայնքի կարիքների համար Սայաթ-Նովայի անվան զբոսայգու հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքներ*** |
| 3 | *Պատվիրատուն* | Վանաձորի համայնքապետարան |
| 4 | *Աշխատանքի անվանումը* | Վանաձոր համայնքի կարիքների համար նախագծանախահաշվաին փաստաթղթերի կազմում |
| 5 | *Աշխատանքի տեսակը* | հիմնանորոգում |
| 6 | *Նախագծման փուլը* | Աշխատանքային նախագիծ |
| 7 | *Նախագծման հիմնական պահանջներ* | Նախագծով նախատեսել Սայաթ-Նովայի անվան քաղաքային զբոսայգու 4.3 հա մակերեսով ամբողջական հիմնանորոգումը, Հիմնանորոգվող զբոսայգու ճեմուղիները ասֆալտբետոնե ծածկույթվ են, այգում առկա են բազալտե հենապատերով ջրավազաններ:<br>Այգին գտնվում է Վանաձորի Աբովյան, Մյասնիկյան, Հերացի և Վարդանանց փողոցներով պարփակված կառուցապատման շրջանում:<br>Նախատեսել հետևյալ հիմնական աշխատանքները՝<br>1. ճեմուղիների ասֆալտբետոնե ծածկույթի քանդում - հիմնանորոգում<br>2. եզրաքարերի փոխարինում<br>3. մայթերի հիմնանորոգում<br>4. ջրահեռացման համակարգերի կառուցում<br>5. կոմունալ ենթակառուցվածքների դիտահորերի նորոգում-փոխարինում ըստ անհրաժեշտության<br>6. պուրակային լուսավորության վերականգնում<br>7. ջրային մակերեսների ենթակառուցվածքների վերականգնում<br>8. լանդշաֆտի կանաչապատում |

| | | |
|---|---|---|
| | | 9. նստարանների և աղբարկղերի տեղադրում<br>10. ըստ հնարավորության բացօթյա բեմի կամ ամֆիթեատրոնի կառուցում |
| 8 | ***Ընդհանուր դրույթներ*** | Կազմել և պատվիրատուի հաստատմանը ներկայացնել նախագծային առաջադրանքը (ճարտարապետահատակագծային առաջադրանք) |
| | | Նախագծային փաստաթղթերը կազմել ՀՀ-ում գործող շինարարական նորմերին և կանոններին համաձայն |
| | | Նախագծային փաստաթղթերը պետք է կազմված լինեն հայերեն և ռուսերեն լեզուներով, ներկայացվեն չորս օրինակ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային կրիչով |
| | | Նախագծային փաստաթղթերը պետք է մշակված լինեն համակարգչային հատուկ ծրագրերի կիրառման միջոցով, կազմված լինեն գունավոր և ընթեռնելի |
| | | Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն փորձաքննությամբ, համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման |
| | | Նախագծային փաստաթղթերի կազմը պետք է ներառի ոչ պակաս քան ստորև նշված մասերը, ընդ որում նախագծերը պետք է կազմել ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. թիվ 128-Ն հրամանի համաձայն, իսկ նախահաշիվները կազմել ՀՀ Կառավարության 23.06.2011թ. թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան |
| | | - ճարտարապետական, կոնստրուկտիվ և ինժեներական լուծումների գծագրեր |
| | | - նախահաշիվ |
| | | - նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ |
| 9 | ***Համաձայնեցումներ*** | Նախագիծը համաձայնեցնել պատվիրատուի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի, համապատասխան շահագրգիռ ստորաբաժանումների, ինչպես նաև ըստ անհրաժեշտության պետական լիազոր մարմինների հետ |
| 10 | ***Փորձաքննություն*** | Նախագիծը պատվիրատուի կողմից կընդունվի միայն փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում |

**<Աշխատանքային ռեսուրսներ>**

| **Հ/Հ** | **Մասնագիտություն** | **Աշխատանքային փորձ, որակավորում** | **Պահանջվող աշխատողների քանակը** |
|---|---|---|---|
| 1 | Ճարտարապետ | 3 տարի | 1 հոգի |
| 2 | Նախագծող-կոնստրուկտոր | 3 տարի | 1 հոգի |

| | | | |
|---|---|---|---|
| 3 | Նախագծող - էլեկտրաէներգետիկ | 3 տարի | 1 հոգի |
| 4 | Նախագծող - ջերմաէներգետիկ | 3 տարի | 1 հոգի |

***<Լիցենզիայի առկայության մասին>պահանջագիր***

Լիցենզիայի առկայությունը պարտադիր է՝
*ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ)՝ ըստ հետևյալ ներդիրի*

1) բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր.

**Ճարտարապետների համար ներկայացնել արտոնագիր Ա1 դասի տրված ՀՀ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ**

**Կոնստրուկտորների համար ներկայացնել արտոնագիր տրված ՀՀ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ**

Մասնագիտական փորձառություն է համարվում նշված լիցենզիայի շրջանականերում նմանատիպ կատարված նախագծային աշխատանքները: Մասնավորապես՝

- Այգիների, պուրակների, հրապարակների բարեկարգում, կառուցում, հիմնանորոգում
- Կրթական օբյեկտների կառուցում, հիմնանորոգում
- Մշակութային օբյեկտների հիմնանորոգում, կառուցում
- Շենքերի էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցառումների նախագծերի իրականացում

***Վանաձոր համայնքի կարիքների համար Վանաձորի թիվ 8 ՆՈՒՀ-ի համար շենքի կառուցում նախագծանախահաշվային աշխատանքներ***

| | | |
|---|---|---|
| 1 | ***Ծրագրի անվանումը*** | ***Վանաձոր համայնքի կարիքների համար Վանաձորի թիվ 8 ՆՈՒՀ-ի համար շենքի կառուցում նախագծանախահաշվային աշխատանքներ*** |
| 3 | ***Պատվիրատուն*** | Վանաձորի համայնքապետարան |
| 4 | ***Աշխատանքի անվանումը*** | Վանաձոր համայնքի կարիքների համար նախագծանախահաշվաին փաստաթղթերի կազմում |
| 5 | ***Աշխատանքի տեսակը*** | Կառուցում |
| 6 | ***Նախագծման փուլը*** | Աշխատանքային նախագիծ |
| 7 | ***Նախագծման հիմնական պահանջներ*** | Նախագծով նախատեսել 6 խմբի համար նախադպրոցական ուսումնական համալիրի կառուցում, այժմյան տնակային պայմաններում գործող մանկապարտեզի տեղում, որը գտնվում է ք. Վանաձոր Մ. Գորկու փողոցում: զբաղեցնում է 1100 քմ հողամաս: Նախատեսել երկհարկանի կառույց, քարե ճակատներով Նախատեսել հետևյալ հիմնական սենքերը՝ |

| | | |
|---|---|---|
| | | 11. խմբասենյակներ՝ ննջարանով և սանհանգույցով<br>12. խոհանոց-ճաշարան<br>13. միջանցքներ<br>14. վարչատնտեսական սենյակներ<br>15. ունիվերսալ դահլիճ /սպորտային - հանդիսությունների/ 100 նստատեղով<br>16. բացօթյա խողահրապարակ<br>17. տարածքի բարեկարգում և ցանկապատում |
| 8 | ***Կոնստրուկտիվ լուծումներ*** | Նախատեսել երկաթբետոնե հիմնակմախքով մասնաշենքեր<br>Հիմքերը՝ ժապավենային , խամքարբետոնից, ե/բ շրջանակների հեծաններով<br>Ծածկեր՝ միաձույլ երկաթբետոնից<br>Արտաքին պատերը՝ կանոնավոր ձևի տուֆ քար, երեսպատում բնական քարե սալիկներով, ջերմամեկուսացում<br>Տանիքը ծրարաձև, փայտե հիմնակմախքով, մի հատվածը հարթ տանիք<br>Դահլիճի թռիչքային կոնստրուկցիաները՝ մետաղական ֆերմաներ , կամ հեծաններ՝ ըստ հաշվարկի |
| 9 | ***Ինժեներական ենթակառուցվածքներ*** | Նախատեսել՝<br>Ջրամատակարարման , ջրահեռացման, էլեկտրասնուցման, հրդեհային ազդանշման, կապի, ջեռուցման, օդափոխության և գազամատակարարման արտաքին և ներքին ենթակառուցվածքներ:<br>Կիրառել էներգախնայող և արևային էներգիայի հաշվին աշխատող համակարգեր: |
| 8 | ***Ընդհանուր դրույթներ*** | Կազմել և պատվիրատուի հաստատմանը ներկայացնել նախագծային առաջադրանքը (ճարտարապետահատակագծային առաջադրանք) |
| | | Նախագծային փաստաթղթերը կազմել ՀՀ-ում գործող շինարարական նորմերին և կանոններին համաձայն |
| | | Նախագծային փաստաթղթերը պետք է կազմված լինեն հայերեն և ռուսերեն լեզուներով, ներկայացվեն չորս օրինակ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային կրիչով |
| | | Նախագծային փաստաթղթերը պետք է մշակված լինեն համակարգչային հատուկ ծրագրերի կիրառման միջոցով, կազմված լինեն գունավոր և ընթեռնելի |
| | | Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն փորձաքննությամբ, համաձայն ՀՀ |

| | | |
|---|---|---|
| | | կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման |
| | | Նախագծային փաստաթղթերի կազմը պետք է ներառի ոչ պակաս քան ստորև նշված մասերը, ընդ որում նախագծերը պետք է կազմել ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. թիվ 128-Ն հրամանի համաձայն, իսկ նախահաշիվները կազմել ՀՀ Կառավարության 23.06.2011թ. թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան |
| | | - ճարտարապետական, կոնստրուկտիվ և ինժեներական լուծումների գծագրեր |
| | | - նախահաշիվ |
| | | - նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ |
| 9 | ***Համաձայնեցումներ*** | Նախագիծը համաձայնեցնել պատվիրատուի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի, համապատասխան շահագործող ստորաբաժանումների, ինչպես նաև ըստ անհրաժեշտության պետական լիազոր մարմինների հետ |
| 10 | ***Փորձաքննություն*** | Նախագիծը պատվիրատուի կողմից կընդունվի միայն փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում |

**<Աշխատանքային ռեսուրսներ>**

| Հ/Հ | Մասնագիտություն | Աշխատանքային փորձ, որակավորում | Պահանջվող աշխատողների քանակը |
|---|---|---|---|
| 1 | Ճարտարապետ | 3 տարի | 1 հոգի |
| 2 | Նախագծող-կոնստրուկտոր | 3 տարի | 1 հոգի |
| 3 | Նախագծող - էլեկտրաէներգետիկ | 3 տարի | 1 հոգի |
| 4 | Նախագծող - ջերմաէներգետիկ | 3 տարի | 1 հոգի |

***<Լիցենզիայի առկայության մասին>պահանջագիր***

Լիցենզիայի առկայությունը պարտադիր է՝

*ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ)՝ ըստ հետևյալ ներդիրի*

1) բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր.

**Ճարտարապետների համար ներկայացնել արտոնագիր Ա1 դասի տրված ՀՀ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ**

**Կոնստրուկտորների համար ներկայացնել արտոնագիր տրված ՀՀ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ**

Մասնագիտական փորձառություն է համարվում նշված լիցենզիայի շրջանակներում նմանատիպ կատարված նախագծային աշխատանքները: Մասնավորապես՝

- Այգիների, պուրակների, հրապարակների բարեկարգում, կառուցում, հիմնանորոգում
- Կրթական օբյեկտների կառուցում, հիմնանորոգում
- Մշակութային օբյեկտների հիմնանորոգում, կառուցում
- Շենքերի էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցառումների նախագծերի իրականացում

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

***Վանաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ էներգախնայող միջոցառումների կիրառմամբ նախագծանախահաշվային աշխատանքներ***

| | | |
|---|---|---|
| 1 | *Ծրագրի անվանումը* | ***Վանաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ էներգախնայող միջոցառումների կիրառմամբ նախագծանախահաշվային աշխատանքներ*** |
| 3 | ***Պատվիրատուն*** | Վանաձորի համայնքապետարան |
| 4 | ***Աշխատանքի անվանումը*** | Վանաձոր համայնքի կարիքների համար նախագծանախահաշվաին փաստաթղթերի կազմում |
| 5 | ***Աշխատանքի տեսակը*** | Կառուցում |
| 6 | ***Նախագծման փուլը*** | Աշխատանքային նախագիծ |
| 7 | ***Նախագծման հիմնական պահանջներ*** | Նախագծով նախատեսել Վանաձոր համայնքի թվով քսան բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում՝ էներգախնայողության միջոցառումների իրականացմամբ, այդ թվում՝ 10 շենք կտուրով, 10 շենք հարթ տանիքով:<br>Շենքերի ցանկը ստորև՝ |

| | հասցեն | հարկը | քառ.մետր | Տանիքի տեսակը |
|---|---|---|---|---|
| 1 | Վարդանանց 43 | 3 | 524 | կտուր |
| 2 | Նժդեհի 7 | 4 | 704 | կտուր |
| 3 | Զոհրաբյան 14 | 5 | 662 | կտուր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Երևանյան 127 | 5 | 510 | կտուր |
| 5 | Դեմիրճյան 6 | 5 | 580 | կտուր |
| 6 | Դեմիրճյան 8 | 5 | 745 | կտուր |
| 7 | Իսահակյան 2նրբ. 1 | 5 | 594 | կտուր |
| 8 | Թումանյան 6 | 5 | 1036 | կտուր |
| 9 | Զաքարյան 4 | 4 | 442 | կտուր |
| 10 | Տարոն 4 Մին Էն 3 | 4 | 552 | կտուր |
| 11 | Տարոն 1 2ա | 3 | 324 | հարթ |
| 12 | Աղայան Ե1 | 9 | 324 | հարթ |
| 13 | Երևանյան 103/1 | 9 | 361 | հարթ |
| 14 | Տարոն 3 ՔՇՀ 7 45 | 5 | 276 | հարթ |
| 15 | Աղայան 59/3 | 9 | 324 | հարթ |
| 16 | Տիգրան Մեծ 77 | 9 | 432 | հարթ |
| 17 | Ռուսթավի 10 | 9 | 360 | հարթ |
| 18 | Վարդանանց 23 | 9 | 750 | հարթ |
| 19 | Ուսանողական 8 | 9 | 361 | հարթ |
| 20 | Տարոն 2 ՔՇՀ 4 23 | 5 | 276 | հարթ |

| | | |
|---|---|---|
| 8 | ***Կոնստրուկտիվ լուծումներ*** | Բոլոր տանիքների համար նախատեսել ջերմամեկուսացման և էներգախնայողության միջոցառումների իրականացում<br>Կտուրով տանիքները նախատեսել տանիքածածկի փոխում, տանիքի կրող կառուցվածքների հիմնանորոգում, հակահրդեհային միջոցառումների իրականացում:<br>Հարթ տանիքների համար նախատեսել նախաշերտերի հիմնանորոգում, ջրամեկուսիչ շերտի կառուցում, տանիքածածկի կառուցում հարթ թիթեղով: |
| 8 | ***Ընդհանուր դրույթներ*** | Կազմել և պատվիրատուի հաստատմանը ներկայացնել նախագծային առաջադրանքը (ճարտարապետահատակագծային առաջադրանք) |
| | | Նախագծային փաստաթղթերը կազմել ՀՀ-ում գործող շինարարական նորմերին և կանոններին համաձայն |
| | | Նախագծային փաստաթղթերը պետք է կազմված լինեն հայերեն և ռուսերեն լեզուներով, ներկայացվեն չորս օրինակ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային կրիչով |
| | | Նախագծային փաստաթղթերը պետք է մշակված լինեն համակարգչային հատուկ ծրագրերի կիրառման միջոցով, կազմված լինեն գունավոր և ընթեռնելի |
| | | Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն փորձաքննությամբ, համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման |
| | | Նախագծային փաստաթղթերի կազմը պետք է ներառի ոչ պակաս քան ստորև նշված մասերը, ընդ որում նախագծերը պետք է կազմել ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. թիվ 128-Ն հրամանի համաձայն, իսկ նախահաշիվները կազմել ՀՀ Կառավարության 23.06.2011թ. թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան |

| | | |
|---|---|---|
| | | - ճարտարապետական, կոնստրուկտիվ և ինժեներական լուծումների գծագրեր<br>- նախահաշիվ<br>- նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ |
| 9 | ***Համաձայնեցումներ*** | Նախագիծը համաձայնեցնել պատվիրատուի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի, համապատասխան շահագրգիռ ստորաբաժանումների, ինչպես նաև ըստ անհրաժեշտության պետական լիազոր մարմինների հետ |
| 10 | ***Փորձաքննություն*** | Նախագիծը պատվիրատուի կողմից կընդունվի միայն փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում |

**<Աշխատանքային ռեսուրսներ>**

| Հ/Հ | Մասնագիտություն | Աշխատանքային փորձ, որակավորում | Պահանջվող աշխատողների քանակը |
|---|---|---|---|
| 1 | Ճարտարապետ | 3 տարի | 1 հոգի |
| 2 | Նախագծող-կոնստրուկտոր | 3 տարի | 1 հոգի |
| 3 | Նախագծող - էլեկտրաէներգետիկ | 3 տարի | 1 հոգի |
| 4 | Նախագծող - ջերմաէներգետիկ | 3 տարի | 1 հոգի |

***<Լիցենզիայի առկայության մասին>պահանջագիր***

Լիցենզիայի առկայությունը պարտադիր է՝
*ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ)՝ ըստ հետևյալ ներդիրի*

1) բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր.

**Ճարտարապետների համար ներկայացնել արտոնագիր Ա1 դասի տրված ՀՀ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ**

**Կոնստրուկտորների համար ներկայացնել արտոնագիր տրված ՀՀ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ**

Մասնագիտական փորձառություն է համարվում նշված լիցենզիայի շրջանականերում նմանատիպ կատարված նախագծային աշխատանքները: Մասնավորապես՝

- Այգիների, պուրակների, հրապարակների բարեկարգում, կառուցում, հիմնանորոգում
- Կրթական օբյեկտների կառուցում, հիմնանորոգում
- Մշակութային օբյեկտների հիմնանորոգում, կառուցում
- Շենքերի էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցառումների նախագծերի իրականացում

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վանաձորի համայնքապետարան
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900232521022
ՀՎՀՀ 06901936

-------------------------------Ս.Ասլանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՇԻՆԷՔՍՊԸՐՏ» ՍՊԸ
Ք.Վանաձոր Թատերական 8/49-1
ՀՎՀՀ 06944187
Հ/Հ՝ 1660013164610100
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ

----------------Ա.Հովսեփյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«22» 04 2021թ. կնքված
**ՀՀ ԼՄՎՔ ՀՄԱԱԾՁԲ-21/40** *ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200 | ***Վանաձոր համայնքի կարիքների համար Սայաթ-Նովայի անվան զբոսայգու հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքներ*** | | | | 1650000 | 1650000 | 1650000 | 1650000 | 1650000 | 1650000 | 1650000 | 1650000 | 1650000 | 1650000 |
| 2 | 71241200 | ***Վանաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ էներգախնայող միջոցառումների կիրառմամբ նախագծանախահաշվային աշխատանքներ*** | | | | 1150000 | 1150000 | 1150000 | 1150000 | 1150000 | 1150000 | 1150000 | 1150000 | 1150000 | 1150000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 71241200 | ***Վանաձոր համայնքի կարիքների համար Վանաձորի թիվ 8 ՆՈՒՀ-ի համար շենքի կառուցում նախագծանախահաշվային աշխատանքներ*** | | | | 2900000 | 2900000 | 2900000 | 2900000 | 2900000 | 2900000 | 2900000 | 2900000 | 2900000 | 2900000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վանաձորի համայնքապետարան
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900232521022
ՀՎՀՀ 06901936

--------------------------------------Մ.Աւլանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՇԻՆԷՔՍՊՐՏ» ՍՊԸ
Ք.Վանաձոր Թատերական 8/49-1
ՀՎՀՀ 06944187
Հ/Հ `1660013164610100
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ

-------------------Ա.Հովսեփյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*«      »           20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________

______________________

գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Պատվիրատու

______________________

______________________

գտնվելու վայրը ______________
հհ______________________
հվհհ______________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«     » «            » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     »     «                    »  20     թ. դուրս գրված N ___  հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«    »    20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _______________-ի
Պատվիրատուի անունը    Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20    թ. _______________-ին կնքված N _______________
պայմանագրի կնքման ամսաթիվը    պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________
ազգանուն, անուն

_______________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________
ազգանուն, անուն

_______________
ստորագրություն